ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

--- հուլիսի 2020 թվականի № ---Ա
ք. Երևան

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի մայիսի 22-ի №01-ՄՄ-12/371 և №01-ՄՄ-12/372, հունիսի 9-ի №01-ՄՄ-12/418 և №01-ՄՄ-12/419 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող մանրաթելքային օպտիկական մալուխների մութ ջիլերի՝ «Թիմ» և «Արփինետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին վարձակալությամբ տրամադրման գործարքների (այսուհետ՝ Գործարքներ) կնքմանը,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2020 թվականի հունիսի 10-ի №ԳԲ/34.1-Մ2-4/2253-20 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ստանալու Գործարքների վերաբերյալ կառավարության դիրքորոշումը,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի հունիսի 16-ի №02/12.8/29300-2020 հանձնարարականի հիման վրա Հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղարի դիրքորոշումները՝ Գործարքների մասով առարկություններ չունենալու վերաբերյալ,

դ) Հանձնաժողովի կողմից Գործարքներին համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, չի սպառնում ազգային անվտանգությանն ու պետական շահերին, և, Ընկերությանը պատկանող գույքի վարձակալությամբ տրամադրումն ունի այդ գույքը «Թիմ» և «Արփինետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման նպատակով օգտագործման նպատակ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող մանրաթելքային օպտիկական մալուխների մութ ջիլերի՝ «Թիմ» և «Արփինետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին վարձակալությամբ տրամադրման գործարքներին:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված Գործարքների կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքները կնքելուց հետո անհրաժեշտ է երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան վերաբերող փաստաթղթերի պատճենները.
2) Ընկերությունն իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2020թ.